ՀՀ Տավուշի մարզի Չինչինի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ առաջատար մասնագետ - հողաշինարար (ծածկագիր՝ 3.1-3) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

08.11.2013

Հայտատու՝ Չինչինի գյուղապետարան
,Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՉԻՆՉԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՉԻՆՉԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ - ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐ
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-3)

Առաջատար մասնագետ - հաղաշինարար՝
Աշխատակազմի առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:
Աշխատակազմի առաջատար մասնագետը իրեն ենթակա աշխատողներ չունի:
Աշխատակազմի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է այլ առաջատար մասնագետը՝ քարտուղարի հայեցողությամբ:
Օրենքով նախատեսված դեպքում բաժնի աշխատակազմի առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
Աշխատակազմի առաջատար մասնագետը ՝
ա) աշխատակազմի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.
բ) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները.
գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:
Աշխատակազմի առաջատար մասնագետը՝
Մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:
Աշխատակազմի առաջատար մասնագետը
ա) աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակում:
բ) աշխատակազմից դուրս շփվում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ.
գ) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:
Աշխատակազմի առաջատար մասնագետը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:
Աշխատակազմի առաջատար մասնագետը աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի:
Աշխատակազմի առաջատար մասնագետը
ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.
բ) ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
դ) ունի համակարգիչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),
2. համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
3. արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
4. մեկ լուսանկար (3x4 չափսի),
5. անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով : Փաստաթղթերն ընդունվում են Չինչինի գյուղապետարանում, ամեն օր ժամը 10-ից մինչև 18-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Չինչինի գյուղապետարանի աշխատակազմ (գ. Չինչին, հեռ.՝ 098-43-53-63:

Մրցույթը կկայանա 2013թ նոյեմբերի 08-ին ժամը 11.00-ին՝ Չինչինի գյուղապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013թ. նոյեմբերի 08 –ին ժամը 18-00-ն

Դիմել Չինչինի գյուղապետարանի աշխատակազմ (գ. Չինչին, հեռ.՝ 098-43-53-63

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գ.Չինչին

Հեռ..՝ +374 98 435363